Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 3

ք. Երևան, 15 ապրիլի 2021 թվական

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (ՍԱՏՄ) կառավարման խորհրդի (Խորհուրդ) հերթական նիստի

Մասնակցում էին՝

Վ. Քերոբյան – ՀՀ էկոնոմիկայի նախարար (Խորհրդի նախագահ)

Ա. Ասոյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար (Խորհրդի անդամ)

Տ. Գաբրիելյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Լ. Նանուշյան – ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ (Խորհրդի անդամ)

Բ. Պիպոյան - «Իրազեկ և պաշտպանված սպառող» հասարակական կազմակերպության ղեկավար (Խորհրդի անդամ)

Մ. Բեգլարյան – ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվական վերլուծական կենտրոնի փորձագիտական խմբի ղեկավար (Խորհրդի անդամ)

Մ. Սանդոյան - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ կառավարման խորհրդի անդամ (Խորհրդի անդամ)

Է.Բասենցյան- ՍԱՏՄ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության փաստաթղթաշրջանառության բաժնի պետ (Խորհրդի քարտուղար)

Հրավիրված էին՝

Գ. Ավետիսյան- ՍԱՏՄ ղեկավար,

Գ. Սարոյան- ՍԱՏՄ ղեկավարի տեղակալ,

Ա.Գևորգյան-«Հանրապետական անասնբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ տնօրեն

Ա. Նիկոյան - ՍԱՏՄ բուսասանիտարիայի վարչության պետ

Մ. Երիցյան- ՍԱՏՄ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետ,

Ա.Հակոբյան - ՍԱՏՄ որակի ապահովման վարչության պետի պարտականությունները կատարող,

Ա. Դանիելյան-ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի Շուկայի վերահսկողության և Սննդամթերքի անվտանգության ոլորտների համակարգման և մեթոդաբանության վարչության պետ,
Ա. Ավետիսյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի զարգացման ծրագրերի վարչության խորհրդական:

Բացակայում էին՝

Ք. Գրիգորյան – ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ (Խորհրդի անդամ),
Ա. Պողոսյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ),
Ա. Առաքելյան – ՀՀ ԳԱԱ-ի Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն, ավագ գիտաշխատող (Խորհրդի անդամ):

Ողջունելով ներկաներին Խորհրդի նախագահ Վ. Քերոբյանը փաստեց, որ քվորումը ապահովված է: Խորհրդի նախագահը ներկայացրեց օրակարգը: Ա. Ասոյանը նշեց, որ օրակարգը բաղկացած է 5 հարցից և առաջարկեց որպես օրակարգի հարց ներառել նաև ռիսկի գնահատման գիտական կենտրոնի նշանակման հարցը:
Խորհրդի անդամները 5 կողմ ձայնով հաստատեցին խորհրդի օրակարգը՝ որպես 6-րդ հարց ներառելով ռիսկի գնահատման գիտական կենտրոնի նշանակումը:

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի N 700-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին հավանություն տալու մասին:

(Վ. Քերոբյան, Գ.Ավետիսյան, Տ.Գաբրիելյան, Ա.Ասոյան, Բ.Պիպոյան, Մ. Բեգլարյան)

Գ. Ավետիսյանը ներկայացրեց, որ ներկա պահին Տեսչական մարմնի պետական վերահսկողություն իրականացնող անձինք իրենց գործառույթների իրականացման ընթացքում կրում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի N 700-Ն որոշմամբ հաստատված

ձևի համազգեստ: Անհրաժեշտություն է առաջացել նաև արդիականացնել և գործնականում օգտագործման համար առավել հարմարավետ դարձնել համազգեստի ձևը:

Գ.Ավետիսյանը հայտնեց, որ «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն բուսասանիտարիայի ոլորտում պետական վերահսկողություն իրականացնող անձինք կրում են համազգեստ, որի կրման կարգը և ձևը հաստատում է կառավարությունը, իսկ 21-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետի համաձայն՝ պետական վերահսկողություն իրականացնող պաշտոնատար անձինք պարտավոր են՝ անասնաբուժական վերահսկողություն իրականացնելիս աշխատանքային պարտականություններն իրականացնել համազգեստով: «Անասնաբուժության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ կառավարությունը հաստատում է անասնաբուժական պետական վերահսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց հանդերձանքի ձևը և կրելու կարգը: Միաժամանակ ընդգծեց, որ համազգեստի կրման պահանջներ սահմանված են ԵԱՏՄ հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի N 317 և N 318 որոշումներով:

Միաժամանակ ներս հրավիրվեց համազգեստը կրող անձը՝ հնարավորություն տալով գործնականում տեսնել համազգեստը:

Բ.Պիպոյանը նշեց, որ այս պահին բացակայում է համազգեստի համար գումար ծախսելու անհրաժեշտությունը, ինչպես նաև իրավական հիմնավորումների համաձայն համազգեստ կարող են կրել միայն սահմանային պետական վերահսկողություն իրականացնող անձինք, արդյունքում վերահսկողական այլ ձևեր իրականացնելիս համազգեստ կրելու պահանջ սահմանված չէ: Հայտնեց, որ նախագիծն ունի իրավական հիմնավորման կարիք՝ մասնավորապես արդյոք առկա է քաղաքացիական ծառայողի համազգեստ կրելու իրավական հիմնավորումը: Հավելեց, որ անգամ իրավական հիմքի առկայության դեպքում այս պահին ֆինանսական տեսանկյունից առկա են խնդիրներ:

Ա.Ասոյանը հետաքրքրվեց, թե արդյոք բյուջեով նախատեսված են նման ծախսեր:

Գ.Ավետիսյանը պատասխանեց, որ այո, նախատեսված է:

Նախագահը հետաքրքրվեց ծախսերի չափով:

Գ. Ավետիսյանը հայտնեց, որ նախատեսված է 16 միլիոն ՀՀ դրամ:

Մ. Սանդոյանը հետաքրքրվեց, թե քանի աշխատակից է կրելու համազգեստը և ինչպես է կատարվելու գնման գործընթացը:

Գ. Ավետիսյանը պատասխանեց, որ 291 աշխատակից է կրելու համազգեստը, իսկ գնման գործընթացը կազմակերպվելու է մրցույթով: Միաժամանակ հավելեց, որ

ամեն դեպքում այս տարի համազգեստ ձեռք բերվելու է, անկախ դրա ձևի փոփոխությունից:

Նախագահը նշեց, որ իր կարծիքով Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի աշխատողները, որոնք նմուշառումներ կամ այլ գործառույթներ են իրականացնում, պետք է կրեն համազգեստ:

Բ.Պիպոյանը հայտնեց, որ ինքն այն կարծիքի է, որ վերահսկողություն իրականացնող տեսուչը պետք է մուտք գործի տնտեսավարող սուբյեկտի տարածք քաղաքացիական հագուստով, որը հնարավորություն կտա ավելի արդյունավետ հայտնաբերել խախտումները:

Ա.Ասոյանը հայտնեց, որ նախագծի վերաբերյալ առկա է մի քանի նկատառում: Մասնավորապես.

Առաջարկեց նախագծի 1-ին կետում հստակ ժամկետ սահմանել անցումային մասն ապահովելու համար, որովհետև ներկայում օգտագործում են համազգեստներ, հնարավոր է և լինեն պահեստավորված համազգեստներ, և նախագծի ընդունման պարագայում անորոշ է մնում դեռևս օգտագործման ենթակա հագուստի օգտագործման հարցը:

Նախագծի 2-րդ կետի վերաբերյալ հայտնեց, որ գործող կարգավորումներով անասնաբուժական և բուսասանիտարական ոլորտների պետական վերահսկողութուն իրականացնող անձիք պետք է կրեն համազգեստ, իսկ եթե ԵԱՏՄ կանոնակարգերով սահմանվում է, որ նաև սննդամթերքի նկատմամբ վերահսկողություն իրականացնող տեսուչները ևս կրում են հագուստ, ապա այդ դեպքում առարկություններ չկան:

Նախագծի 3-րդ կետով նախատեսվում է սահմանել համազգեստի ձև և կրման կարգը ու բնութագրվում է, թե ինչ կտորից պետք է լինի համազգեստը, օրինակ բամբակ և այլն: Այս կարգավորմամբ հետագայում գնման գործընթացում կառաջանան խնդիրներ: Պետք է ընդհանուր բաց գրվեն, սակայն նախագծում նշված է 67% պոլիէսթեր, 33% վիսկոզե բաղադրությամբ, ոչ պակաս 170 գր/մ^2: Որն էլ առաջացնում է հարցեր, մասնավորապես արդյոք նախօրոք պարզ է, թե ումից է գնվելու և առկա է պայմանավորվածություն, թե ուղղակի լավ նկատառումներից ելնելով սահմանվել են այս չափորոշիչները, իսկ այդ դեպքում հանարավոր է չգտնվեն համապատասխանողներ, և գնման գործընթացը ձախողվի:

Միաժամանակ հայտնեց, որ առկա են տեխնիկական բազմաթիվ հարցեր, որոնք աշխատանքային կարգով կներկայացվեն:

Մ. Բեգլարյանը հետաքրքրվեց, թե արդյոք կանանց համար, որպես այլընտրանք, տաբատներ նախատեսված են:

Գ. Ավետիսյանը հայտնեց, որ նախատեսված են:

Մ. Բեգլարյանը նշեց, որ նախագծի համաձայն, աշխատողի մեղքով սահմանված ժամկետներից շուտ օգտագործման համար ոչ պիտանի դարձած համազգեստը փոխարինվում է նորով իրենց միջոցների հաշվին: Հետաքրքրվեց, եթե համազգեստը վնասվում է դժբախտ պատահարի հետևանքով, որն է մոտեցումը:

Գ. Ավետիսյանը հայտնեց, որ այդ դեպքում աշխատակցի մեղքը բացակայում է:

Գ. Ավետիսյանը ներկայացրեց, որ համազգեստի բաղադրության մանրամասն նկարագրումը պայմանավորված է որակյալ ապրանք ձեռք բերելու հանգամանքով:

Տ.Գաբրիելյանը տեղեկացրեց, որ նման խնդիր հետ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն առնչվել է: Կենդանիների ականջապիտակների հետ կապված ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված էին խիստ պահանջներ: Մրցույթի գործընթացի ժամանակ առաջացան խնդիրներ: Առաջարկեց կառավարության որոշմամբ չափորոշիչները չսահմանափակել, որը կարող է հանգեցնել մրցույթի չկայացմանը և կառավարության որոշման փոփոխությանը: Չափանիշները սահմանել մրցույթի տեխնիկական բնութագրում:

Լ.Նանուշյանը հետաքրքրվեց, թե արդյոք մյուս տեսչական մարմինների աշխատակիցները կրում են համազգեստներ, թե ոչ:

Ա.Ասոյանը հայտնեց, որ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի աշխատողները կրում են, առողջապահության և աշխատանքի, ինչպես նաև քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնում նախատեսվում է ներդնել համազգեստ կրելու պահանջը:: Ամեն դեպքում նախատեսվում է բոլոր տեսչական մարմինների աշխատողներին ապահովվել համազգեստով:

Նախագահն առաջարկեց հանձնարարել Տեսչական մարմնին նախագիծը խմբագրել՝ սահմանելով որոշ չափանիշներ, ինչպես նաև կրման կարգը և ներկայացնել հեռակա քվեարկության:

Բ.Պիպոյանը հավելեց, որ անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարության դրական եզրակացությունն այն մասին, որ բոլոր տեսուչներն իրավունք ունեն կրել այդ համազգեստները, քանի որ թվարկված հիմնավորումներով, բացի սահմանային պետական վերահսկողություն իրականացնող և բուսասանիտարներ տեսուչից, այլ տեսուչներն իրավունք չունեին:

Նախագահը հայտնեց ամեն դեպքում նախագիծը շրջանառվելու է և ՀՀ արդարադատության նախարարությունը ներկայացնելու է եզրակացություն:

Նախագահը առաջարկեց, խորհրդի անդամները համաձայնվեցին, Տեսչական մարմնին հանձնարարել ներկայացված առաջարկությունների հիման վրա երկշաբաթյա ժամկետում նախագիծը լրամշակել և ներկայացնել էլեկտրոնային քվեարկության:

2. Այրում-Ջիլիզա երկաթուղային կայարանի շահագործման վերաբերյալ:

(Վ. Քերոբյան, Գ.Ավետիսյան)

Նախագահը ներկայացրեց հարցի նախաբանը: Հայտնեց, որ երկաթուղային ճանապարհով բեռներ ստանալու ժամանակ բավականին ժամանակ է ծախսվում, գնացքները կանգնում են սահմանների վրա, մինչ կիրականացվեն փորձաքննությունները: «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության ղեկավարությունը խնդրել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության արագացնել սահմանային վերահսկողության գործընթացը, որպիսի գնացքները երկար ժամանակ չկանգնեն սահմանի վրա, որը հանգեցնում է մեծ ծախսերի: արդյունքում որոշվեց հարցը բարձրացնել Խորհրդի նիստում, քննարկել և գտնել արդյունավետ լուծում:

Գ.Ավետիսյանը ներկայացրեց, որ սահմանային հսկիչ կետն աշխատում է և գնացքներն երկար չեն պահվում սահմանին: Հիմնականում իրականացվում է բուսասանիտարական վերահսկողություն, սննդամթերքի և անասնաբուժական բեռների վերահսկողությունն իրականացվում է Երևանում: Բուսասանիտարական վերահսկողությունը տևում է առավելագույնը 1 ժամ:

Նախարարը հետաքրքրվեց գործընթացի մեխանիզմով:

Գ. Ավետիսյանը պատասխանեց, որ սահմանային հսկիչ կետի տեսուչը տեղյակ է գնացքի չվացուցակից և ժամանման պահին լինում են տեղում: Անհրաժեշտության դեպքում կատարվում է նմուշառում:

Նախագահն առաջարկեց, որ հաշվի առնելով «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության դիրքորոշումը 1 ամսյա ժամկետում հասկանել վերահսկողության գործընթացի, ինչպես նաև համագործակցության առավել արդյունավետ կազմակերպման մեխանիզմները և տեղյակ պահել խորհրդի անդամներին:

Խորհուրդը համաձայնեց՝ ՍԱՏՄ ղեկավար Գ. Ավետիսյանին հանձնարարել՝ մեկ ամսյա ժամկետում կազմակերպել եռակողմ հանդիպում՝ ՀՀ էկոնոմիկայի, ՍԱՏՄ-Ի և «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության ղեկավարության միջև, մանրամասն ուսումնասիրել խնդիրները, քննարկել դրանց

լուծման ուղիները և արդյունքների մասին 2021 թվականի մայիսի 27-ին կայանալիք նիստում զեկուցել Խորհրդի անդամներին:

3. Հայաստանի Հանրապետությունում իրացվող պեստիցիդների որակի նկատմամբ հսկողության վերաբերյալ:

(Վ. Քերոբյան, Գ.Ավետիսյան, Տ.Գաբրիելյան, Ա.Ասոյան, Բ. Պիպոյան, Մ. Բեգլարյան)

Նախագահը ներկայացրեց, որ այս հարցն արդեն մի փոքր քննարկվել է, և նպատակառումն այն է, որ պեստիցիդները պետք է վաճառվեն ինչպես դեղերը, այսինքն դեղատներում:

Բ. Պիպոյանը հայտնեց, որ դա տարբերակ է, սակայն խնդիրը հիմնահատակ չի լուծում, քանի որ բացակայում է սննդամթերքում պեստիցիդների ստուգման գործիքակազմը:

Գ. Ավետիսյանը հայտնեց, որ խնդիրն առաջացել է, երբ բողոք է ներկայացվել պեստիցիդների արդյունավետության վերաբերյալ:

Բ. Պիպոյանը հայտնեց, որ անհրաժեշտ է ավելացնել պեստիցիդի նկատմամբ վերահսկողությունը:

Նախագահը հետաքրքրվեց ներմուծվող պեստիցիդի գրանցման և դրանց նկատմամբ իրականացվող ստուգման գործընթացով:

Գ. Ավետիսյանը ներկայացրեց գրանցման կարգը և հետագայում դրանց նկատմամբ իրականացվող ստուգման ընթացքում առաջացող խնդիրը, հանրապետության տարածքում օգտագործվող ամբողջ պեստիցիդների մնացորդային քանակները սննդամթերքում որոշելու համար պահանջվող մոտավոր գումարը: Ներկա պահին մոնիթորինգային ծրագրի շրջանակներում իրականացվում են սննդամթերքում որոշ պեստիցիդների մնացորդային քանակների որոշում:

Ա. Ասոյանը ներկայացրեց, որ պեստիցիդների և թունաքիմիկատների ստուգման համար առկա է ստուգաթերթ, որի մեջ ներառված է օրենքով սահմանված պահանջները, որոնց, որ պետք է համապատասխանի տվյալ պեստիցիդը կամ ագրոքիմիկատը: Այսինքն ամեն անգամ դա ստուգելու համար ստուգաթերթ հաստատելու կարիք չկա:

Գ. Ավետիսյանը ներկայացրեց ԵԱՏՄ անդամ պետություններում պեստիցիդների գրանցման կարգը և հայտնեց, որ ներկա պահին մշակվում է անդամ պետություններում գրանցման միասնական ընթացակարգի նախագիծ:

Ա. Ասոյանը նշեց, որ անկախ պեստիցիդների միասնական գրանցման կարգի առկայությունից, շուկայահանման ընթացքում իրականացվում է վերահսկողություն այդ պեստիցիդի նկատմամբ: Միաժամանակ սահմանային վերահսկողության շրջանակում ներմուծման ժամանակ Հայաստանի Հանրապետության և ԵԱՏՄ օրենսդրության մեջ առկա է խնդիր: «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքի 18-րդ հոդվածի համաձայն ներմուծման ժամանակ պետք է իրականացնել փորձաքննություն, բայց ԵԱՏՄ երկրներից ներմուծման ժամանակ այն համարվում է տեղափոխում , ոչ թե ներմուծում և փորձաքննություն չպետք է իրականացվի, չնայած որոշ դեպքերում իրականացվում է: Հետագայում նաև վերահսկելու է իրականացվում նաև շուկայահանված ապրանքների նկատմամբ, սակայն հետագա կիրառման նկատմամբ վերահսկողական մեխանիզմները բացակայում են:Անհրաժեշտ է իրականացնել մոնիթորինգ, ընդհանուր պատկերը հասկանալու համար: Նույն խնդիրը դեղերի ոլորտում է: Չի լինում ստուգել գրանցած և դեղատանը վաճառվող դեղը մարդը ճիշտ է օգտագործել, թե ոչ: Առաջարկվում է խստացնել կարգավորումները՝ դեղի վերահսկողության տրամաբանությամբ, տարածել դեղի նկատմամբ իրականացվող վերահսկողության մեխանիզմները: Ամենակարևորը, իրականացնել կիրառման ճիշտ մեթոդների լայնածավալ իրազեկում. ուսուցողական և կրթական ծրագրեր, որովհետև շատերն ուղղակի չգիտեն, թե այդ նյութը ինչ բույսի համար է նախատեսված, օգտագործում են սխալ կամ սահմանված քանակները չեն պահպանում: Այս պարագայում վերահսկողությունը դառնում է անիմաստ և ապարդյուն:

Հաշվի առնելով այն, որ արդյունավետ վերահսկողության համար ՀՀ ներմուծվող բոլոր պեստիցիդները և ագրոքիմիկատները պետք է ենթարկվեն փորձաքննության, Ա. Ասոյանը առաջարկեց հարցը քննարկել շահագրգիռ մարմինների հետ, քանի որ ըստ տեղեկատվության ոչ բոլոր ներմուծվող/ տեղափոխվող պեստիցիդներն են փորձաքննություն անցնում: Նաև առաջարկեց ուսումնասիրել սահմանային վերահսկողության և փորձաքննությունների մասով ԵԱՏՄ և ՀՀ օրենսդրության համապատասխանությունը և փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը:

Լ.Նանուշյանը առողջապահական տեսանկյունից կարևոր լրացում ներկայացրեց, նշեց, որ սխալ օգտագործումից բացի առկա է ևս մեկ խնդիր՝ ցածր իրազեկվածության և սխալ մակնշման արդյունքում թունավորման դեպքեր են արձանագրվում մարդկանց շրջանում տարեկան միջինը 100-120 դեպք: Անցած տարի մի փոքր ավելի քիչ են եղել դեպքերը, քանի որ նախորդ տարիների ընթացքում իրազեկման լայնածավալ աշխատանքներ են համատեղ իրականացվել: Ներկայումս մեր առաջարկն է նաև այդ իրազեկման աշխատանքները մեծ ծավալով շարունակել, որովհետև տարեկան 100 մարդու թունավորումը քիչ թիվ չէ:

Ա. Ասոյանը հայտնեց, որ մակնշում ներկայումս ստուգվում է, սակայն խնդիրը կայանում է նրանում, որ պեստիցիդը վաճառվում է ընդհանուր տարայից առանձնացված՝ փոքր չափաբաժիններով, որի վրա մակնշումը բացակայում է: Մակնշումը կարող է լինել տարայի վրա կամ առանձին տրված թղթի վրա, բայց իրազեկվածություն չկա:

Բ.Պիպոյանը Լ. Նանուշյանից հետաքրքրվեց թունավորման դեպքերը լինում են պեստիցիդից, թե ոչ:

Լ. Նանուշյանը նշեց, որ թունավորումները լինում են թունաքիմիկատներից:

Բ. Պիպոյանը հետաքրքրվեց, թե արդյոք թունաքիմիկատների սխալ օգտագործման արդյունքում ենք ունենում թունավորման դեպքեր, թե սննդում թունաքիմիկատի մնացորդի:

Լ. Նանուշյանը նշեց, որ խոսքը գնում է օգտագործման մասին: Հավելեց, որ տեղեկատվությունն ուղարկվել է մարզպետներին, որպիսի իրականացնեն ուժեղացված հսկողություն:

Նախագահը հետաքրքրվեց, արդյոք առկա է վերլուծություն կամ պատկերացում, թե անորակ սննդամթերքի օգտագործումը ինչ ազդեցություն ունի մարդու առողջության վրա:

Մ. Բեգլարյանը ներկայացրեց, որ այս դեպքում խոսքը գնում է քիմիական ռիսկերի գնահատման մասին, այդ թվում պեստիցիդների:

Պեստիցիդների առանձնահատկությունը կայանում է նրանում, ի տարբերություն օրինակ մետաղների, նաև սուր թունավորման դեպքեր են գրանցվում, բայց մեր կատարած աշխատանքները վերաբերվում են թունավորությանը: Այստեղ գործ ունենք քրոնիկ թունավորման հետ, երբ մնացորդային քնակություններ պարունակող սննդամթերքը մարդն օգտագործի, և տարիների ընթացքում այն թունավոր ազդեցություն ունենա: Այսինքն, ունենք սննդամթերք, որի սպառումը մեզ արդեն հայտնի է, ուսումնասիրել ենք, թե մեր բնակչությունը (նաև թիրախային խմբերը) միջինում որքան է սպառում, բնակչության որ հատվածն ինչքան կարող է սպառել և այդ մթերքը, որքան պեստիցիդ է պարունակում: Համադրելով այդ տվյալները՝ մենք կարողանում ենք գնահատել, թե արդյոք այդքան քանակություն պարունակող պեստիցիդը, մթերքի սպառման արդյունքում ռիսկային է լինելու, թե ոչ այդ քանակությամբ տվյալ մթերքում առկա է, այդ մթերքը այդքան սպառվեց, արդյոք դա ռիսկային է լինելու, թե՝ ոչ:

Շատ հաճախ լինում է նաև այնպես, որ վերահսկողության ժամանակ ավելի շատ թիրախավորում ենք պարունակությունը սահմանվածը գերազանցում է, թե ոչ, սակայն ռիսկի գնահատումը գալիս է ապացուցելու, որ կարող է նույնիսկ

պարունակությունը գերազանցի, այսինքն այստեղ անօրինական օգտագործման հետ կապված խնդիր ունենանք, օգտագործման կարգը խախտենք, բայց սպառման տվյալների հիման վրա դա ռիսկային չլինի: Կարող է լինել նաև ճիշտ հակառակը, երբ սահմանված պարունակությունների գերազանցումներ չունենք, բայց սպառման արդյունքում այդ պեստիցիդը կարող է մարդկանց առողջության համար լինել ռիսկային:

Բ. Պիպոյանը օրինակների վրա ներկայացրեց ռիսկի գնահատումը:

Տ. Գաբրիելյանը հայտնեց, որ հիմնական խնդիրն այն է, որ սահմանափակվի կամ առավել արհեստավարժ դառնան այն վաճառակետերը, որոնք վաճառում են պեստիցիդներ՝ չվախենալով այն հանգամանքից, որ կկրճատվի վաճառակետերի թիվը, օրինակ 170-ը կդառնա 50, սակայն արդյունքում կունենանք 50 որակյալ վաճառակետ: Վերջիններս վերահսկելը շատ ավելի հեշտ կլինի:

Նախագահը հայտնեց, որ առկա է լուծման երկու տարբերակ, մեկը դա կարգավորումների խստացումն է, մյուս՝ վերահսկողությանը:

Գ. Ավետիսյանը հայտնեց, որ յուրաքանչյուր տարի վերահսկողություն է իրականացվում պեստիցիդների բոլոր վաճառակետերում՝ մոտ 190, կատարվում է նմուշառում և իրականացվում է ընդհանուր 500 փորձաքննություն:

Բ. Պիպոյանը նշեց, որ անհրաժեշտ է ունենալ ընդհանուր պատկեր սկսած, թե ավելի շատ վնաս ունենում ենք մնացորդներից, թե ուղիղ կիրառությունից: Հնարավոր է պարզվի, որ երկրում արդեն պետք է օգտագործվի այլ պեստիցիդ: Անհրաժեշտ է ունենալ ելակետային տվյալներ, որի հիման վրա հնարավոր կլինի գնալ առաջ:

Ա. Ասոյանը հայտնեց, որ մինչև վերլուծություն կատարելը, հնարավոր է իրականացնել մի շարք կոնկրետ գործողություններ: Օրինակ՝ նույն տեմպով շարունակել ստուգումները՝ հնարավորության դեպքում ավելացնելով այն հատկապես հիմա՝ հաշվի առնելով ոլորտի սեզոնայնությունը: Առաջարկեց ավելացնել դիտարկումների քանակը, իսկ լաբորատոր փորձաքննությունների անհնարինության դեպքում վերահսկողություն իրականացնել մակնշման նկատմամբ:

Տ. Գաբրիելյանը նշեց, որ պետք է ուշադրություն դարձնել բավարար քանակի մասնագետների՝ ագրոնոմների առկայությանը:

Նախագահն ուշադրություն հրավիրեց ոլորտում վերլուծության կարևորություն վրա:

Նախագահն առաջարկեց, իսկ Խորհուրդը համաձայնվեց, Ա. Ասոյանի կողմից ներկայացված առաջարկություններց բացի, հարցի քննարկման նպատակով

հանդիպում կազմակերպել ներմուծողների և վաճառողների հետ, ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը և ՍԱՏՄ-ին ուսումնասիրել, թե, որ դոնոր կազմակերպության հետ կարող ենք ծավալուն ուսումնասիրություն իրականացնել:

Բ. Պիպոյանը հետաքրքրվեց, թե որն է լինելու դոնոր կազմակերպությունների կողմից իրականացվող հետազոտությունների/ուսումնասիրությունների նպատակը:

Նախագահը հայտնեց, որ նպատակն է պարզել, թե պեստիցիդների սխալ օգտագործման պատճառով ինչ վնաս է հասցվում բնակչությանը, պատճառները և լուծման ուղիները:

Մ. Բեգլարյանը ներկայացրեց, որ այն բոլոր խնդիրները, որոնց մասին խոսվեց, հաշվի են առնվում պատշաճ գյուղատնտեսական պրակտիկա կոչվող համակարգի շրջանակում: Կա նաև սերտիֆիկացում՝ GLOBALGAP, որը շատ ընդունված է ամբողջ աշխարհում պտուղ բանջարեղենի սերտիֆիկացման համար և կարգավորում է պեստիցիդների օգտագործումը սկզբից մինչև վերջ:

Արդյունքում, եթե ունենում ենք գրանցված պեստիցիդներ, ունենում ենք իրենց կիրառության հետ կապված պատշաճ գործելակերպեր, հետևողներ, իրազեկված գյուղատնտեսներ, արտադրանքի արտահանման ժամանակ խնդիրներ չեն լինի:

4. Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության կողմից հաշվետվությունների ներկայացման հաճախականության սահմանելու վերաբերյալ:

(Վ. Քերոբյան, Ա.Ասոյան, Ա, Հակոբյան)

Ա. Ասոյանը ներկայացրեց, որ հարցի էությունը կայանում է նրանում, որ Խորհուրդը պետք է որոշի, թե որակի ապահովման վարչությունը երեք ամիսը մեկ ներկայացնի հաշվետվություն, թե վեց ամիսը:

Խորհրդի անդամների 7 կողմ ձայնով որոշեց որակի ապահովման վարչության կողմից հաշվետվության ներկայացման ժամկետ սահմանել 6 ամիսը մեկ անգամ՝ հավանություն տալով համապատասխան որոշման նախագծին:

6. Ռիսկի գնահատման գիտական կենտրոնի նշանակում

(Վ. Քերոբյան, Գ.Ավետիսյան, Ա.Ասոյան)

Խորհրդի անդամների 5 կողմ ձայնով որոշեց հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի և Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի հետ համատեղ մշակել կառավարության համապատասխան որոշման նախագիծ, որով կսահմանվի ռիսկի գնահատման գիտական կենտրոնի նշանակման կարգ, կենտրոնին ներկայացվող չափանիշները:

Միաժամանակ Ա. Ասոյանն առաջարկեց խորհրդի անդամներին, ովքեր կարող են իրենց ներդրումն ունենալ մշակման աշխատանքներին, ներկայացնել իրենց առաջարկությունները:

Միաժամանակ, Խորհրդի նախագահն, կարևորելով օրակարգի 5-րդ հարցի քննարկումը, առաջարկեց այն քննարկել հաջորդ նիստում, որը կայանալու է 2021 թվականի մայիսի 27-ին, ժամը 14.00-ին:

Առաջարկեց նաև, որպես հաջորդ նիստի օրակարգի 1-ին և 2-րդ հարցեր ընդգրկել նախորդ երկու նիստերի որոշումների ընթացքի քննարկումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ,
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. ՔԵՐՈԲՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Է. ԲԱՍԵՆՑՅԱՆ